ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15-Ն

23 մարտի 2018թվական | Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ, ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ) ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ներդաշնակ ճարտարապետական տեսքն ապահովելու նպատակով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինական կոմիտեի կողմից մշակված Հայաստանի Հանրապետության բնակավայրերում նոր կառուցվող (վերակառուցվող, վերանորոգվող) շենքերի և շինությունների տանիքների նախընտրելի գունային լուծումները սահմանող ուղեցույցը (այսուհետ՝ ուղեցույց) և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքում նոր կառուցվող (վերակառուցվող, վերանորոգվող) շենքերի և շինությունների տանիքների նախընտրելի գույները՝համաձայն ուղեցույցի:
2. Ընդունել ի գիտություն, որ Անուշավան համայնքի համար ուղեցույցով նախատեսված է
   RGB 148-54-52
   RAL 3001

ծածկագրով գույնը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ-6	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ա. Կարոյան	կողմ			
Ռ. Հակոբյան	կողմ			
Ռ. Հարությունյան	կողմ			
Ա. Վարդանյան	կողմ			
Գ. Վարդանյան	կողմ			
Ա. Տեփանոսյան	կողմ			

Անուշավան համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան
23 մարտի 2018թվական
գ. Անուշավան